



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

No 625-Պ/Ք

« 26 » հունիս 2015

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ
ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԹՎԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՄԵԹՈԴԱԿԱՆ
ՑՈՒՑՈՒՄՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 12-ի թիվ 1579-Ն որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 14-րդ կետի «դ» ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հունվարի 30-ի նիստի N3 արձանագրային որոշման հավելվածի 10-րդ կետը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

Հաստատել Հայաստանի Հանրապետության պետական բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորողների թվի հաշվառման մեթոդական ցուցումները՝ համաձայն Հավելվածի:

ԱՐՄԵՆ ԱՇՈՏՅԱՆ

Հավելված

ՀՀ կրթության և գիտության նախարարի
.....2015թ. թիվ հրամանի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ
ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԹՎԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ
ՄԵԹՈԴԱԿԱՆ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ

1. Սույն մեթոդական ցուցումներն ուղղված են Հայաստանի Հանրապետության պետական բարձրագույն ուսումնական հաստատություններում /այսուհետ՝ Հաստատություն/ հաշվապահական հաշվառում իրականացնող ստորաբաժանման կողմից /այսուհետ՝ Ստորաբաժանում/ սովորողների թվի հաշվառման աշխատանքների բնականոն ընթացքի ապահովմանը:
2. Պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ /անվճար, առկա/ սովորողների միջին տարեկան համակազմը հաշվարկվում է հետևյալ ձևով.

$$Հ_{մտ} = U_{տս} - U_2 * 1/2 + U_0 * 1/3$$

որտեղ՝

$Հ_{մտ}$ - սովորողների միջին տարեկան համակազմն է

$U_{տս}$ - տվյալ ֆինանսական տարվա սկզբին սովորողների թիվն է

U_2 - տվյալ ֆինանսական տարվա նախատեսվող շրջանավարտների թիվն է

U_0 - տվյալ ֆինանսական տարում նախատեսվող ընդունվողների թիվն է

1/2, 1/3 – տվյալ ֆինանսական տարվա մեջ ուսումնական ամիսների մասնաբաժինն է:

3. Սովորողների միջին տարեկան համակազմը հիմք է հանդիսանում պետական լիազորված մարմնի և հաստատության միջև ուսման վարձի փոխհատուցման պայմանագրի կնքման համար, որը ճշտվում է Հաստատության կողմից 9-ամսյա հաշվետվության հիման վրա հետևյալ ձևով և կնքվում է լրացուցիչ համաձայնագիր.

$$\zeta_{\text{տն}} = U_{\text{տն}} - U_2 * 1/2 + U_0 * 1/3 - U_{\text{ս}} * 60\% + U_{\text{գե}} * 1/3$$

որտեղ՝

U_2 - տվյալ ֆինանսական տարվա փաստացի շրջանավարտների թիվն է

U_0 - տվյալ ֆինանսական տարում փաստացի ընդունվողների թիվն է

$U_{\text{ս}}$ - սովորողների տարեկան մաղումն է

$U_{\text{գե}}$ - Հաստատությունից սովորողների եկածների և գնացածների տարբերությունն է, դրական լինելու դեպքում այն գումարվում է, բացասական լինելու դեպքում՝ հանվում:

4. Հաստատության ուսման վարձի փոխհատուցմամբ սովորողների միջին տարեկան համակազմի ավելի ճշգրիտ տվյալ համարվում են համաձայնագրում ամրագրված մեծությունները:
5. Վճարովի ուսուցման մասով հաշվարկվում է.
 - 1) Սովորողների միջին ամսական ցուցակային թիվ՝ նախորդ ամսվա 1-ին օրվա և նախորդ ամսվա վերջին օրվա դրությամբ ուսանողների փաստացի թվի միջին թվաբանականը
 - 2) Սովորողների միջին տարեկան ցուցակային թիվ՝ սովորողների միջին ամսական ցուցակային թվերի տարեկան հանրագումարի հարաբերությունը 12-ի:
6. Հաստատության՝ ուսումնական գործընթացն ապահովող և սովորողների հաշվառումն իրականացնող ստորաբաժանումը յուրաքանչյուր ամսվա 5-րդ աշխատանքային օրը նախորդ ամսվա միջին ամսական ցուցակային թիվը ըստ ուսուցման ձևի՝ /առկա, հեռակա, հեռավար, դրսեկության/, կրթական հիմնական ծրագրերի /բարձրագույն և հետբուհական/, ըստ աստիճանների, ներկայացնում է ֆինանսական և հաշվապահական հաշվառում իրականացնող ստորաբաժանմանը, սովորողների թվի ճշգրիտ հաշվառումն ապահովելու նպատակով:
7. Ստորաբաժանումը վճարովի ուսուցմամբ սովորողների ուսման վարձավճարների գծով եկամտի ճանաչման պահին ըստ փուլերի (ամիսների կամ կիսամյակի) որոշման գործընթացն իրականացնում է Հաստատության գործադիր մարմնի ղեկավարի կողմից հաստատված եղանակով, հիմք ընդունելով ուսումնական պլաններով հաստատված՝ ըստ ուսուցման ձևի և աստիճանի սահմանված ժամանակաշրջանները, հաշվի առնելով սովորողի կողմից հաշվեգրված ուսման վարձի չափը: